

# ԱԱԺԽԱՌՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԱՅԱԳՈՒՄ ԵՒ ԿԱՐՍԻ ՃՐՁԱՆՈՒՄ

ՍԻՄ. ԶԱՒԱՐԵԱՆԻ

Յալորնի հանգամանքներում ուրիշի օգնութեան դիմելը—վարկ (կրեցիում)—ամենատարածւած և առաջնակարգ դեր կարարող երսովն է, թէ սովորական ժամանակ, և թէ մաճաւանդ կրիտիկական հանգամանքներում, որպիսիք են չբեր տարիները: Նահապետական կեանքի պայմաններում, որպէս նաև աչժմ ալտոեղամբեղ՝ «քաղաքակրթութեան» ձեռք չուած տեղերում, փոխագութեան ժամանակ վերցնում են շատ աննշան տոկոս, իսկ հացի և կեանքի այլ անհրաժեշտ պիտուքների համար՝ տոկոս ամեննին չի վերցնում: Բայց երբ աշքարտի ու հարստի միջն վարքերութիւնը աճում է, առեղորական դննդասութիւնը աւելի ու աւելի է եր մշում բնական դննդասութիւնը, որկոսը աւելի ու աւելի աճում է, հարեանին առանց վարձադրութեան օգնելու դէպքերը աւելի ու աւելի սակաւ են դառնու մ: Մինչև վերջին 10—20 տարիները սովորական որկոս համարում էր ոռուբլուն 20 կոպէկ տարեկան ( $100\text{-ին}$  տարեկան  $20\%$ ) կամ 10 ոռուբլուն ամսեկան 20 կոպէկ, որ անում է տարեկան  $24\%$ :

Մինչև վերջին տարիների անբերրիութիւնը 20 տոկոս վերցնում էր միան ապահով ու կարող ընտանիքներից. իսկ աշքարները, որոնց պարուքը եր վճարելու կարողութիւնը մի քիչ կատկածելի էր թում, վճարում էին 25 և 30 և մինչև իսկ  $40-50\%$ : Վաշխառուները, որոնք ոչինչ չունեցող գիւղացուց վերցնում էին մանեթին (=ոռուբլի) 30 կոպէկ, ամենքի աչքում—թէ դույի և թէ վերցնողի համար—խշմուանքաւոր մարդիկ էին նկատում:

Բայց ահա վրայ հասան չընը տարիներ ( $1894$  և յաջորդ թ.), Փոխ դրույների թիւը սակաւեց, կարօտների թիւը աճեց. նւազեց նաև հացով ու փողով պարուք դրածը եր սրանալու երաշխաւորութիւնը. Տոկոսները սկսեցին բարձրանալ, կրծարւեց նաև պարուք վճարելու պայմանաժամը. Գարնանը պարուքով դրած հացը (ցորեն) պէտք է աշնանը ալսինքն  $4-5$  ամսից վերադարձներ, Ոմանք հնարք էին գոնում պայմանաժամը  $4-3$  ամիս նշանակել, անզիս որ ամեն 4 կամ 3 ամսում բարդում էր

ուրարեկան դոկում. Այդ պալմաններում քիչ չէր պարահում, որ 5—10 ու մի քանի տարում դառնում էր մի քանի դասնեակ կամ հարիւր մանէթ.

1880 թ. Բաշքէնդի գիւղացի (Երեանի գաւառ, Կըրխբուլալի գաւառակ) Ա. Մ. ուելական եկեղեցու երեցփոխից վերցրել էր 5 ռուբլի  $20\%$  ով ժամանակին գիւղացին պարուքը չվճարեց. դոկումի չափը ամելացաւ, ուրիշակը նորոգելու ժամանակամիջոցը կրծարեց, և 14 տարուց լեզու 5 ռուբլին դառնել էր 375 ռուբլի, որը մինչև օրս էլ պահանջում է եկեղեցու շահերի պաշտպանողը.

Գիւղացի Ա. Մ., Զալա գիւղացի (Կարսի շրջան, Շորագեալի գաւառակ) կարսեցի Գ. Բ.-ից 1886-ին վերցրել է 60 ռ., վեց ամսում եղ տալու պալմանով, 10 մանէթ վերադրով ( $=33\%$ ). բայց չուեց. Ցաջորդ տարում գիւղացին պարուսորւեց, դոկուների փոխարէն, մի սոմար (20 փութ) ցորեն ցանել եւ ուրց, պալմանով որ, ցանածը դուրս գալով, հունձի կէսը կը դաէ Բ.-ին, Հունձը ուեց 5 սոմար, որից 3-ը որւեց Բ.-ին (1 սոմար սերմացուն, 2 սոմարը դոկուների փոխարէն). սոմարը 20 մանէթ հաշւելով՝ դոկոս որւեց 40 ռուբլի, չաշւած  $1\frac{1}{2}$ , դեսիադինան մշակելու աշխատութիւնը, որը Բ.-ի բամնի համար 11 մանէթից պակաս չէր կարու լինել,  $-3$  աշջորդ տարում գիւղացին պարուտիրոջ համար ցանեց 12 կոր, և սոմացւեց 3 սոմար ցորեն, որից Բ.-ին տւած մասը արժէր 18 ռուբլի և  $7\frac{1}{2}$  մանէթ էլ աշխատութեան համար Ցաջորդ տարում ցանեց 20 կոր ցորեն, որից Բ.-ին որւեց բաժին 31 ռուբլու. 14 ռուբլի էլ արժէր աշխատութեան մասը, Ընդամենը պահանջարէրը սրացել էր ցորեն  $40+18+3=89$  ռուբլու և աշխատութեամբ  $11+7\frac{1}{2}+14=32$ , ռուբլի, ուրեմն 121 ռուբլի. Բայց այդ, 1892-ի գարնանը որւել է Բ.-ին դրամով 22 ռ. 20 կոպէկ. Տրւած էր, ուրեմն, ընդամենը շուրջ 142 ռ., և չնակած այդ ամենին, աշնանը 1893 թ., չորհիւ պալմանաթշթիւ ամեն վեց ամիս նորոգելուն, Կարսի նորարի հաստատած աքորի համաձայն, վիշել գիւղացին մնում էր պարու 220 ռուբլի.

Ուրեմն, եօթ տարում, չնակած որ տրւած էր դոկոս բերքով 121 մանէթի և դրամով 22 մանէթ, 60-ը դառել էր 220 մանէթ,

Նոյն Զալակի գիւղացի 0. Ա. 1892-ի գարնանը նոյն վաճառական Բ.-ից վերցրել է 100 ռուբլի կանիլիկ, պակմանով որ հունձի կէսը ( $50\%$ ) որուի իր դոկոս Պարուքը չկարացաւ վճարել. պարուքը դառաւ 150 ռ., 1893-ի գարնանը ի հաշիւ 100 մանէթի պոկոսի, կիսելու պակմանով ցանեց մի սոմար ցորեն և սոմացւեց 6 սոմար, որից (մի սոմար սերմացուն հանելով) պահանջարէրոջ մաս հասաւ 2, սոմար (30-ական մանէթով); ամինքն 75 ռուբլի. իսկ 50 ռուբլու համար դոկոս բարդւեց 20 ռուբլի, որով գիւղացին մնաց պարուական 175 ռուբլի:

Գիւղացին ալ ես ոչ չունէր բանելու. պահանջարէրը դալիս է նո-

Դան երկու զոդ լծան եղներ և մի կով, արժողութեամբ 80 ռուբլու, այլ նաև 2 սոմար ցորեն ու մի սոմար զարի 84 ռուբլու արժողութեամբ, պարտքը դառնում է ուրիշն 175+84+80=339 ռուբլի. Դորա վրալ զալիս են և 170 ռուբլի տոկոս, աճապէս որ պարտամուրհակը, նորարական կարգով, գրում է 509 ռուբլու, եւ այն, և այլն:

Վաշխառուների ձեռքը (գլխաւորապէս քալաքացիների) ասորինանարար անցնում է խելց գիւղացոց կենդանի և մեռած դրամագլուխը, անցնում է ամբողջ գիւղացիական աշխատանքը, գիւղացու ամբողջ կեանքը, և պահանջարէրը դառնում է նորան պարտական մնացած գիւղացու կեանքի լիակատար դէրը:

Խօսելով վարկի (կրեդիտ) մասին, չեմ կարող լռութեան դալ նորա մի բնորոշ ձեւ, որ նկատում է մեզնում:

Երբ գիւղացու պարտքերը մեծ չափսերի են հասնում, պահանջապիրոջը, կամ կամովին, կամ դարական ոստիկանի ձեռքով, որւում է գիւղացու տաւարը, կաթսաները և այլ տնքեսական ինւենտարը. Հարուստը անասունների ազդրերին նշան է դնում և լանձնում դարձեալ նոյն գիւղացուն, նրա վրալ հաշելով կենդանիների արժէքը, կամ թէ սրանալով նոյն գիւղացիներից որոշած չափով իւղ (կոմից կէս փութ) և կոմի հորթը, նոր կարիքի դէպքում պարտագէրը տալիս է «իւրա գիւղացուն հարկաւոր չիթը, ցորենը, նաւթը, այդ ամենը փոշի վերածելով և տոկոս վրաէ գալով: Որովհետեւ պարտքը տոկոսներով երթէք միարեւէ չի կարող, գիւղացու ժախքը սաստիկ նւազում է, համենելով օրապահիկ անհրաժեշտ ապրուստի, Դորանով ձեականապէս պահպանում է գիւղական ծուխը (ռունը), իսկ պարտագէրը պահովում է իրեն մշտական եկամուգը: Մինչև կոկորդը այդ ձեւ պարոքերի մէջ խրւած գիւղացիք, որոնք ամբողջապէս աշխատում են պահանջարէրերի համար, կոչում են «մարաբա»: Այդ դրութիւնը շատ մօտ է ճորտի դրութեան, և դորանից, որպէս մի սարսափելի բանից, ամենքը վախենում են, «Մարաբա»-ներից շարերը ամօթից ծածկում են իրենց դրութիւնը հարեաններից:

Քեարիմքէնդ գիւղում (Նոր-Բալաղէդի զաւ.) 1894-ի ամառը, բացի գիւղացիներին պարկանող 77 կոմից, 50 գլուխ էլ կար, որ որւած էր գիւղացիներին Նոր-Բալաղէդի բնակիչների կողմից նոյն քեարիմքէնդցիներին. իսկ այժմ սոքա ծառաջում են որպէս վարձու հովիւներ, հովիւներ իրենց կովերի՝ իրենց հողաբաժինների վրա:

Զալա գիւղում (Կարսի շրջան), ուր 110 դուն կաէ, 12 դուն լիակատար մարաբաններ են, առանց սեփական գուքի. այլ խօսքով կագարեալ ճորտի դրութիւն,

Պաշտօնապէս պահանջարէրերի չարաբերութիւնները դէպի մարաբանները հասդարաւում են նորարական եղանակով: Այդպիսի պահմանագրերից

է մկը, որի առթիւ դատարանում վէճ կար, աւելորդ չեմ համարում ախ-  
քեղ առաջ բերել.

«1893 թ. հոկտ. 4 մենք, ներքոյ սուրագրեալներս գիւղացի Բոեա-  
ջե (==Բուեաջեան) մի կողմից և Զալա գիւղի Շորագեալ գաւառակի  
բնակիչներ Յակոբ Թորոսեան Մարտոնանց և Գէորգ Մարտոնանց  
պալմանաւորւեցինք ալսածէս. գալ 1894, 1895 և 1896 թթ-ին մենք  
մեր աշխատանքով, գործիքներով և եզներով Զալա գիւղի մեր ար-  
դերը ցանելով, պարտաւորւում ենք ցորենի և գարու սուրացւելիք.  
Հունձը կիսելով՝ մի կէսը թունել Բոեաջեին. 2) ես, Բոեաջն պար-  
տաւորւում եմ թունել նրանց՝ Մորուեանցներին՝ ախնքան ցորեն  
ու գարի, որքան հարկաւոր կ'լինի արփերի ցանքսի համար, 3)  
մենք, Մարտոնանցներս, բացի վերոտիշեալ կէսից պարտաւորւում  
ենք Բոեաջեին ամեն մի վերտիշեալ դարիներում դալ կէսը աչն  
գարու և ցորենի, որքան սուրացել ենք արժերը ցանելու համար. 4)  
ես, Բոեաջեւս, պարտաւորւում եմ ընդունել ցորենն ու գարին Զա-  
լա գիւղում. 5) պալմանաթուշլթը սորգագելուց առաջ մենք Մա-  
րտոնանցներս, Նորանից՝ Բոեաջեից՝ արժերը ցանելու և հունձը հա-  
մաքելու աշխատութիւնների համար սուրացել ենք 100 ռուբլի և աւե-  
լին չպիտի պահանջնենք. 6) ես, Բոեաջես, չպիտի սուրանամ Մա-  
րտոնանցներից ցորենի և գարու չարթը (==Դարման). 7) այս պալ-  
մանը երկու պալմանաւորւուշ կողմերը պէտք է սրբութեամբ և ան-  
խախո պահենք. խախորու կողմը պիտի վճարի արդար կողմին 300  
ռուբլի բուգանք (==Նէուստովկա). 8) Որովհետի պալմանադրութեան  
գումարը չենք կարու որոշել, ուստի հաշիւները վերջացնելուց չետու  
որքան կ'պարագանի դրւագի հարկ (==Պէրունական հարկ) մենք եր-  
կու կողմերս պարտաւորւում ենք վճարել կիսովի»:

Այս պալմանաթուշլթը լիակատար պարզելու համար պէտք է նկա-  
գել, որ պալմանաթշլթի մէջ լիշւած 100 ռուբլին Մարտոնանցների նախ-  
կին պարոքն է եղած. Սոքա չկարացան պալմանը կատարել, և Բոեաջեը  
դիմեց կարսի բանաւոր դատարանը (ալովիսնիք սուժ), զանգագելով որ  
գիւղացիք (Մարտոնանցներ) հաւաքել են 27 սոմար ցորեն և 6 սոմար գա-  
րի, որից կէսը 357 ռուբլու՝ պարկանում է իրեն, բացի 300 ռուբլի  
բուգանքից, կարսի բանաւոր դատարանը, քննելով գործը 1894 թ. օգոստ-  
17-ին, վճռեց արգելք դնել 357 ռուբլու ցորենի և գարու վրայ:

Ալսպէս են ձեւական կերպ սուրանում գիւղացոց լարագերութիւնները  
դէպի պահանջարկերը և սովորաբար ալդպիտի ելք են ունենում նոցա  
ընդհարումները.

Գիւղացոց պարտքերը առաջ էլ չար էին, բայց չոեսնւած չափակը  
ընդունեցին վերջին դարիների երաշտութիւններից ի վեր՝ Աթէ, օրինակ,

հաւագուալու լինենք Զալավի զիւղացիներին (ուր 110 տուն կաէ), նոցա պարոքերը 35—40 հազար են համառում, և պարո են 10—12 անձերի (ամեն մէկին 200-ից մինչև 10 հազար ռուբլի), Եթէ նոյն իսկ այս գումարը կիսելու լինենք, այն դէպումն էլ ամեն մի գիւղական տան վրա կը ընկնի 200-ական ռուբլի պարոք, որի տոկոսները միան դարեկան կը կազմեն 50—100 ռուբլի:

Զալան ամենալաշխառու գիւղն է իմ շրջած ամբողջ շրջանում. (գրաւը շրջել է 72 գիւղ՝ Երեանի նահանգի և Կարսի շրջանի լեռնալին մասերում), Բայց և ուրիշ գիւղերում դրութիւնը միաւն մի փոքր է դուրսնից լաւ Պարոքերի գումարը, Տիշտ է, աւելի նւազ է, բայց և պարոք դալու կարութիւնը նշանաւոր չափով նւազ է քան բերրի Զալապատմ:

Խօսելով դոկոսների սաստիկ բարձրանալու մասին, ես չեմ կարու չնշանակել այն մեծ դարերութիւնը, որ այդ կողմից գործթիւն ունի աշխատի և հարատի դրութիւնների միջև. Միջին դոկոսը 100-ին 30 լինելով՝ հարուաժները կարող են փող ճարել 20 դոկոսով, աշխատներին չեն դալիս նոյն իսկ 40—50 դոկոսով:

Փոքր Մազրա գիւղում՝ գարնանը 1894 թ. դեղական թուրք խանութպանը բւեց իւր հարեան քրդին մի կոդ ցորեն՝ պայմանով որ աշնանը վերադարձնի Յ կոդ. Երբ ես նկատեցի աշխատանք վերադրի անկանոնութիւնը՝ հա սկսեց արդարանալ և պարասիսնեց թէ իւր պարոքով դւած հացի մեծ մասը բոլորովին կորչում է, որովհետև իւր պարուապանները վճարելու անկարողներ են:

Տանուրէրներից շաբերի առելով, որոնք վաւերացնում են դնակին կերպով կարարու փոխառութիւնները, վերջին ժամանակները փոխառութիւնների թիւը շատ աճել, համարեա կրկնապատկեւել է, թէս պէտք է առել որ փոխ դւած գումարները առաջւանից աւելի քիչ են, փողի սահաւոթեան պարագանով. Դորանով պէտք է երեխ բացադրել փոխառութիւնների և ժամանակը անցկացրած պարուամուրհակների համար դւած դանգաղների սակաւանալը. Այդ հանգամանքը պարզաբանելու համար ես, չնորհիւ դատական կառավարութեան սիրալիրութեանը, որը չզլացաւ ինձ դալ հարկաւոր դեղեկութիւնները, կարող եմ առաջ բերել մի քանի թւած նշաններ,

Մեր շրջագալած դեղերի բոլոր հաշորարար դարարաններում 1880—83 թթ-ըի քառամեակում քաղաքացիական (օնվիլ) վէճերի գումարը կազմում էր 2 միլիոն 416 հազար ռուբլի. դասը դարի անց՝ 1890—93 թւականներին գումարը կազմում էր 2 միլիոն 242 հազար ռուբլի. ընդունելով որ այդ ժամանակամիջոցում ազգաբնակութիւնը աճել է  $1/5$ -ով<sup>1)</sup>, իշեալ թւերը

<sup>1)</sup> Յօդւածիս հեղինակ պ. Զաւարեանին պիտի նկարենք որ դասը

ցուց են բալիս որ ժողովրդի վարկավին կարութիւնը իջել է  $20^{\circ}/\text{-ով}$ , իսկ եթէ մեր շրջանը քննելու լինենք հաշտարար դառարանների կողմից, կը գետնենք մեծ դարբերութիւններ. մինչդեռ էջմիածնի հաշտարար բաժնում քաղաքացիական վէճերի թիւը 2.046-ից (1880—83 թթ-ին) բարձրացել էր 3.198-ի (1890—93 թթ-ին), և վէճերի գումարը 350 հազար ուուրուց բարձրացել էր 661 հազարի, միւս հաշտարար բաժիններում քաղաքացիական վէճերի և թիւը և գումարը նւազել էր. Նոր-Բագալցոյի շրջանում գումարը 361 հազարից իշել էր 220 հազարի, Դարաշիչազգի բաժնում 236 հազարից /չել էր 121 հազարի, Երևանի բաժնում 854 հազարից՝ 607 հազարի, Ալէքսանդրապոլի բաժնում 854 հազարից՝ 537 հազարի, Փամբակի բաժնում մը այն 86 հազարից բարձրացել էր 96 հազարի, որպէս և էջմիածնի բաժնում, ինչպէս ասացինք, 350 հազարից աճել էր 661.000-ի:

Յիշել գեց բաժններում քաղաքացիական գործերի թիւը 1880—83 թթ-ին էր 18.828, իսկ 1890—93 թթ-ին՝ 18.878, վէճերի գումարը առաջնա քառամեակում էր 2.416.000 ռ., (մի հոգի բնակչի վրայ գալիսէր Հ. Ա. Ա.), երկրորդ քառամեակում (դասը դարի էստու) միայն 2.242.000 ռ. (ալսինքն մի հոգի բնակչի վրայ ընկնում էր 4,1 ուուրլի, հաշվ առնելով բնակիչների աճումը  $\frac{1}{6}$ -ականով), Ուրեմն 80-ական թւականներին սկզբում մի հոգի բնակչի վրայ գալիս էր Նոր-Բագալցոյի և Դարաշիչազգի բաժիններում վէճի գումարը 5,2 և 6,1, դասը դարի էստու 2,6 և 3 ռ., ալսինքն կէսից էլ պակաս (հաշվ առնելով բնակիչների աճումը). Ալէքսանդրապոլի և Փամբակի բաժիններում 7,8 և 3,3-ից ընկել էր 4,1—3 ռ., Երևանի գաւառում 8,5-ից ընկել էր 5,1 ուուրլու, և միայն էջմիածնի բաժնում նա բարձրացել էր 3,1 ուուրլուց մինչև 5,5 ռ.:

Կասկած չկաց որ լեռնավին ու հարթավին մասերում դարբերութիւնը աւելի ևս խիստ կը նկատուէր, եթէ Երևանի գաւառական բաժնում մասնակից չլիներ հարթավին մասի ազգաբնակութիւնը, իսկ էջմիածնի բաժնում՝ խելց Արարանի մի մասը,

Աները առաջ բերած թւերը շար են պերճ, որպէս զի կարելի լինել կասկածել բնակիչների վարկավին ընդունակութեան նւազման մասին, և միշտամանակ բաւականին համոզիչ են հասկանալու համար թէ ինչու փոխադրութեան որոշումները 90-ական թւականների անքան անփոշ դարիներում պէտք է առաջքան խիստ բարձրանալին:

Այդ թւերը աւելի ևս կարենութիւն են սպանում, երբ նոցա հանդէպ դնում ենք դափարանական կառավարութեան ալ թւեր, Քրէական

---

դարում մի ժողովրդի  $\frac{1}{6}$ -դով աճելը (ուրեմն 50 դարում կրկնապատկելը) ամենախիստ աճելութեան չափս է նկարում սպաթիստիկավի մէջ նամանաւանդ անհաւանական ինկատի առնեած զաւառների համար, որ աշդ դասնամեակի մէջն է ընկնում 1892 թւականի խոլերավին դարին,

գործերի աշխակները, որ կազմւած են 1880-83 և 1890-93 թւականների համար<sup>1)</sup>), ցուց են բալիս որ ծանր քանցագործութիւնների թիւը 31%/-ով նւազել է լիշեալ տասնամեակում, մինչդեռ մանր քանցանքները (գուղութիւններ և ալն), ընդհակառակը, թւով աճել են, ի բաց առած նրեանի գաւառը. Դառաջիշագում և ֆամբակում նոցա թիւը աճել է 60 և 40%/-ով, որ ակնչապնի կերպով ցուց է բալիս դնդեսական պակմանների ծանրութիւնը.

Այժմ աւելի ևս հասկանալի է քաշաքացիական (=զիսաւորապէս դրամական) վէճերի գումարի նւազելու պատճառը. Եթէ վէճերի թիւը աւելի սակաւացել է, այդ, ի հարկէ, նրանից չէ որ ժողովուրդը աւելի ճշշտապահ և չիրակ է դառել, այլ նրանից, որ պահանջափէրերը (կրեդիտորներ) վստահութիւն չեն ունեցել դադարանի միջոցով գիւղացուց որ և բան սրանալու, որի համար և փոխարութիւնները նւազել են<sup>2)</sup>.

<sup>1)</sup> Աշխակները առաջ են բերւած գրքում և բռնում են 294-295-րդ էջերը.

<sup>2)</sup> Կերկար լուսածը մենք սուսերէնից թարգմանաբար առաջ ենք բերում պ. Զաւարեանի այս օրերս լուս գիսած մի կարեոր հերազօռութիւնից՝ С. Заваровъ. Опытъ изслѣдованія сельскаго хозяйства хлѣбороднаго района Эриванской губерніи и Карской области. Тифлисъ 1899. Изд. Имп. Кавк. Общества Сельск. Хозяйства. Գրքի էջ 286—297, զլում՝ „Кредитъ, задолженность“ Այս աշխարութեան մասին մենք կ'աշխարենք մօրերքս մի հիմաւոր ծանօթութիւն բար: